

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱՑԻԿՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Բանալի բառեր՝ գրադարանային հավաքածու, փոստային բացիկ, մաքսիմաֆիլիա, բաց նամակ, ֆիլատելիա:

Keywords: library collection, postcard, maximaphily, open letter, philately.

Դժվար է պատկերացնել մարդ, ով երբեք բացիկներ չի գնել կամ չի ստացել: Մինչդեռ փոստահեռագրային այս տեսակը հասարակական կյանքում կարևոր նշանակություն է ունեցել ու դեռ շարունակում է ունենալ: Գեղեցիկ ձևավորված բացիկը, որը պարունակում է որոշակի հուզական զգացմունք, օգտագործվում է շնորհավորանքների, ինչ-որ իրադարձության հիշեցման, հուշանվերի և այլնի համար: Այն ուղարկվում էր փոստով կամ տրվում առձեռն՝ որպես նվեր ուղերձ:

Իր տեսակով բացիկը բաց նամակի տեսակ է, որի դիմային մակերևույթն ունի թեմատիկ նկար, իսկ դարձերեսը նախատեսված է հասցեն, տեքստը գրելու ու նամականիշ փակցնելու համար: Փոստային բացիկների հավաքածուն անվանում են ֆիլոկարտիա, իսկ նրանց ուսումնասիրումը, հավաքումը և թողարկումը՝ մաքսիմաֆիլիա: Մաքսիմաֆիլիան ի հայտ եկավ 20-րդ դարի սկզբին, բայց լայն տարածում գտավ և կազմակերպվեց միայն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Դրան զուգահեռ ի հայտ եկան գեղարվեստական փոստային բացիկների տեսակներ, որոնք կոչվում են քարտմաքսիմում: Բացիկների այս տեսակները իրենց նկարագրով կողմում ունենում են քարտի պատկերին համապատասխանող նամականիշ:

Թեմատիկ առումով փոստային բացիկները լինում են շնորհավորական, ճարտարապետական կառույցներին վերաբերող բացիկներ, գեղարվեստական, գովազդային, պատմական իրադարձություններ պատկերող բացիկներ, հայրենասիրական և այլն: Բացիկների թողարկմամբ զբաղվում են հրատարակչությունները կամ լուսանկարչական ընկերությունները, ինչպես նաև լինում են անհատ ստեղծագործողների ձեռքով պատրաստած բացիկներ, որոնք սովորաբար միօրինակ են: Բացիկները նաև վավերագրական փաստաթուղթ են համարվում, քանի որ նրանցով կարելի է դատել հանրային գեղարվեստական ճաշակի, ազգային առանձնահատկությունների, ինչպես նաև մոռացված նկարիչների անունները, փոփոխվող քաղաքների պատկերները վերհանելու, դարաշրջանի կյանքն ու մթնոլորտը պատկերացնելու առումով:

Որպես իրողություն հասարակության պատմության մեջ բացիկների հայտնվելը հստակ չի նշվում: Մակայն վարկածները շատ են ամեն դեպքում յուրաքանչյուր ազգ յուրովի է պատմում բացիկների հայտնվելու մասին: Ժամանակի ընթացքում գաղափարը, թե ինչպիսին պետք է լինի բացիկը, բազմիցս փոխվել է, և այն բացիկները, որոնք մենք այսօր գնում ենք, քիչ նմանություն ունեն հին օրինակների հետ: Օրինակ՝ չինացիների համար բացիկը սովորական այցեքարտ էր: Եթե մեկն այցելության էր գնացել և այնտեղ տանտիրոջը չէր գտել, անպայման նրան իր գնալու մասին այցեքարտ բացիկ էր ուղարկում: Ուշագրավ են առաջին համաշխարհային ժամանակ Ճապոնիայի զինվորական գերատեսչությունների կողմից թողարկված կաղապարային բացիկները, որոնց վրա գրված էր. «Հայտնում եմ, որ կենդանի եմ և առողջ: Հասցե չեմ գրում, որովհետև չգիտեմ, որտեղ կգտնվեմ վաղը, բայց ձեր նամակները կհասնեն ինձ, եթե ճիշտ արտատպեք փոստային կնիքը: Խոնարհվում եմ հարազատներին և ծանոթներին առջև» [Советская Россия, 1966, с. 91–94]:

Անգլիայում ամենահին բացիկը, որը թվագրվում է 15-րդ դարով, պահվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում և պատկանում էր դուքս Օռլեանին: Հայտնի է, որ դուքսը բանտում եղած ժամանակ իր սիրելիին Սուրբ Վալենտինի տոնի կապակցությամբ գեղեցիկ նկարագրող բաց նամակ է ուղարկել, և ռոմանտիկ պատմությունը անգլիացի հասարակության մեջ շատ քննարկվելով՝ վերածվել է սովորույթի: Մարդիկ սկսել են միմյանց տարբեր տոների կապակցու-

թյամբ գեղեցիկ ձևավորումներով ու բարեմաղթանքներով բաց նամակներ գրել: Այնուհետև բացիկի գաղափարը քննարկման է ներկայացվում ավստրոգերմանական կոնգրեսում, նրանց թողարկման և առանձին վաճառքի համար: Առաջարկը մերժվում է՝ համարվելով նամակներ գրելու անվայելուչ ձև: Այնուհետև Ֆրանկո-պրուսական պատերազմի ժամանակ Ֆրանսիացի և գերմանացի զինվորականների մոտ ծնվեց բաց նամակ գրելու և պատկերագրադրելու միտք, որից օգտվեցին կոմերսանտները, ու միայն 1872 թ. սկսած այն լայն արձագանք ստացավ, և սկսվեց թողարկվել փոստային բաժանմունքներում:

1872 թ. Ռուսաստանը նույնպես ակտիվորեն արձագանքեց այս նորամուծությանը: Ռուսները կայսրությունում թողարկվեց «Բաց նամակը», այսինքն՝ բացիկը: Բնակչությանը այն շատ էր դուր եկել. քաղաքի ներսում առաքման նամակները հրատարակում էին շագանակագույնով և ունեին «քաղաքային» մակագրությունը, կար նաև մի հետաքրքիր հետգրություն ևս «Փոստային բաժանմունքը պատասխանատվություն չի կրում նամակների բովանդակության համար» [Чапкина, 2009, 384]:

Առանձնահատուկ է խորհրդային բացիկների ուսումնասիրությունը, դրանք այնքան գեղեցիկ են, սրամիտ, տոնական տրամադրություն և երջանկության զգացում են ստեղծում: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, փոքր տպարանները սկսեցին բացիկներ տպել՝ փորձելով վերակենդանացնել նախահեղափոխական Ռուսաստանի ավանդույթները: Այնուամենայնիվ, եթե նախկինում բացիկների վրա հաճախ կային Սուրբ Ծննդյան և կրոնական խորհրդանիշների պատկերներ, ապա նոր երկրում այս ամենը ընկավ արգելքի տակ, և ԽՍՀՄ բացիկները շնորհավորում էին միայն Հոկտեմբերյան հեղափոխությունը, ինչը մարդկանց իրականում չէր ոգևորում, ու նման բացիկները այնքան էլ պահանջված չէին: 1950-ականներից հետո ԽՍՀՄ-ում հիմնվել է բացիկների զանգվածային արտադրություն: Ընկերներին ու սիրելիներին բացիկով շնորհավորելը պարտադիր պայման էր համարվում: Խոսելով խորհրդային ամանորյա բացիկի մասին՝ չի կարելի չնշել ականավոր նկարիչ և մուլտիպլիկատոր Վլադիմիր Իվանովիչ Ջարուբինի անունը: Գրեթե բոլոր այն սրամիտ, հուզիչ նկարներով բացիկները, որոնք ստեղծվել են ԽՍՀՄ-ում 60-70-ականներին, նկարչի ձեռքի գործն են: Խորհրդային բացիկների սյուժեները լրջորեն վերլուծում են ժամանակին հատուկ սիմվոլիզմի տեսանկյունից, և ապացուցում, որ սովորական բացիկի մեջ շատ ավելի իմաստ կա, քան դա կարող է թվալ առաջին հայացքից:

Անցնելով պատմական քառուղիներով՝ բացիկը հասարակության մեջ իր նամակագրության տեսակով դարձավ գեղարվեստական մշակույթ և ազգային սովորույթ: Մարդիկ բոլոր տոներին, անգամ նվերներ նվիրելիս, միմյանց բացիկներ էին նվիրում: Իսկ ֆիլատելիստական կազմակերպությունները, այն համարելով որպես ազգային ժառանգության, ազգային ինքնությունը հաստատող կարևոր փաստ, այլ փոստային հավաքածուների հետ մեկտեղ սկսեցին և՛ հավաքել և՛ նաև թողարկել:

Մեր երկրի փոստային ծառայության պատմության սկիզբը համարվում է 19-րդ դարը, սակայն պատմագիր Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» և Մատենադարանում պահվող բազմաթիվ նամակներից, որոնցից ամենահինը թվագրվում է 12-րդ դարով, կարող ենք ենթադրել, որ փոստային ծառայությունը Հայաստանում գործել է շատ ավելի վաղ ժամանակներից: Ինչևէ, ըստ 1896 թվականի տվյալների Երևանի փոստահեռագրային ծառայությունն ի սկզբանե Թիֆլիսի փոստահեռագրային շրջանի մաս էր կազմում և ենթարկվում էր Ռուսական կայսրության Փոստերի ու հեռագրերի կառավարման գլխավոր վարչությանը: Այն ապահովում էր ողջ Երևանի նահանգի կապն այլ բնակավայրերի հետ: Այդ ժամանակներից էլ հայտնի են բազում փոստային բացիկներ, որոնք ունեն ճանաչողական նշանակություն, քանի որ ձևավորված են ազգային և հոգևոր հերոսների, հայրենիքի մշակութային վայրերի, ճարտարապետական կառույցների պատկերներով: Բացիկները մեծամասամբ թողարկվում էին Թիֆլիսում: Հրատարակիչներին պարտադրում էին լինել զուսպ իրենց ասելիքի մեջ, պահպանել բացիկների սեղմ, փոքրիկ չափսերը, իսկ գեղարվեստական ձևավորման առումով պետք է լինեին հնարավորինս շքեղ: Այդ ժամանակաշրջանի բացիկներից կան ՀԱԳ հավաքածուում. դրանք Թիֆլիսում հրատարակված ճարտարապետական հին կառույցներ են, դերասաններ, մշակութային գործիչներ: Առկա են շատ հետքերի բացիկներ

Գաբրիել Մունդուկյանի «Խաթաբալա» կատակերգությունից, որը թողարկվել է համանուն ամսագրի հրատարակությունում, քանի որ իր վրա կրում է հրատարակության կնիքը: Հավաքածուում առկա են նաև գրադարանի ֆոնդերում պահվող այն գրքերը, որոնք մեծ տեղեկություն են պարունակում փոստային բացիկների մասին: Օրինակ՝ Մուրեն Առաքելյանի «Հայաստանը ֆիլատելիայում» (1980 թ.). գիրքն իր մատենագիտական համառոտ նկարագրությամբ տեղեկացնում է Խորհրդային Հայաստանում թողարկված նամակների, նամականիշների և փոստային բացիկների մասին:

Հետաքրքիր են Արևմտյան Հայաստանում 19-րդ դարավերջին և 20-րդ դարակզբին թողարկված բացիկները, որոնց մասին ներկայացված են Օսման Բյոքերի «Հայերը Թուրքիայում 100 տարի առաջ» գրքում (2008 թ.). այստեղ զետեղված են մինչև 1914թ. Օսմանյան Թուրքիայում բնակվող հայերի կյանքի մասին պատմող փոստային բացիկներ և լուսանկարներ:³⁴ Ի լրումն այս նյութի նշեմ, որ ՀԱԳ բացիկների և այլ մշակութային կենտրոնների հավաքածուներում նույնպես կան Արևմտյան Հայաստանում թողարկված ու Արևմտյան Հայաստանի մշակութային ժառանգությունը ներկայացնող բացիկներ: Դրանք ինչպես ճարտարապետական գեղեցիկ հուշարձաններ են ներկայացնում, այնպես էլ Թուրքիայում հայկական համայնքի կյանքը ներկայացնող նյութեր:

2007-ին Ցեղասպանության թանգարան ինստիտուտը հրատարակում է «Հայկական սպորտը Օսմանյան կայսրությունում» վավերագրական բացիկների հավաքածուն, որն առկա է նաև ՀԱԳ-ում: Բացիկների հավաքածուն ներկայացնում է հայազգի օլիմպիական չեմպիոնների, ճանաչված մարզիկների և ֆուտբոլային խմբերի, որոնք հայտնի են եղել ոչ միայն Թուրքիայում, այլև նրա սահմաններից դուրս: Ցեղասպանության թանգարան ինստիտուտը Հայկ Դեմոյանի հեղինակությամբ 2019-ին հրատարակել է նաև «Հայկական եկեղեցիները ու վանքերը միջազգային փոստային բացիկներում» գիրքը: Գրքում ներկայացված են միայն Արևմտյան Հայաստանի եկեղեցիներն ու վանքերը, որոնց մեծ մասը ոչնչացված է կամ վերածվել է մզկիթի [Դեմոյան, 2019, 180]:

Փոստային բացիկներ որպես տպագրության տեսակ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում գրադարանային ֆոնդերում: Բոլոր գրադարաններում էլ սկզբնական շրջանում այն որպես գրադարանային նյութ անտեսված է եղել, միայն 20-րդ դարակզբից փոստային բացիկներն արժևորվել են որպես ազգային ժառանգություն: Ու նրանց պահպանման համար ձևավորվել է հատուկ համակարգ՝ հնարավորինս պատշաճ և անվնաս պահպանելու համար: Գրադարանների մեծ մասում այս նմուշները տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների մասնագիտացված հավաքածուների մաս են կազմում: Օրինակ՝ Ազգային գրադարանում, այն ընդգրկված է «Ոչ գրքային հրատարակությունների» ենթաբաժնում: Բաժնում համարված բացիկային հրատարակությունները ստանում են անհատական մատենագիտական նկարագրություն և արտացոլվում են այբբենական և կարգային գրացուցակներում: Իսկ նրանց պահպանումն իրականացվում է ֆիլատելիստական կանոններին համապատասխան:

2012 թ. լույս է տեսել «Հայաստանի ազգային գրադարանի գանձերը» գիրք-ալբոմը, որտեղ ներկայացված են ՀԱԳ հավաքածուի բացառիկ նմուշներից մի քանիսը (այժմ ցուցադրված են գրատպության թանգարանում): Բացառիկ են Մխիթարյան Միաբանությանը, Վենետիկի Մու-

³⁴ Գրքի հեղինակը՝ թուրք պատմաբան և հրատարակիչ Օսման Բյոքերը և իտալացի կոլեկցիոներ *Օրլանդո Կարլո Կալումենյոն* Ստամբուլում, այնուհետև Լոնդոնում կազմակերպում են ցուցադրություն, որը կրում է «Իմ սիրելի եղբայր» խորագիրը: 2 ցուցահանդեսներն էլ զերազանցում են այցելուների քանակով: Ցուցադրված հավաքածուն հանրությանը գերել էր իր հետաքրքրությամբ: Դրանք ապացույցներ են, որոնք ներկայացնում էին հարյուր տարի առաջ Թուրքիայի հայ բնակչության կերպարը: Ցուցադրություններից հետո հրատարակիչը ձեռնամուխ է լինում լույս ընծայել այս գիրքը: Պատճառը պարզ էր. հայերը հսկայական դեր էին կատարել կայսրության տնտեսական և մշակութային կյանքում: Գրքում հեղինակը հիշատակում է, որ մինչև 1914 թ. միայն Ստամբուլում եղել է 47 եկեղեցի և 67 հայկական դպրոց, հրատարակվել է 158 օրաթերթ: Աշխարհով մեկ հայտնի էին Թոքթայան հյուրանոցները, ճարտարապետ Պալյանները, Աբդուլահյան եղբայրների լուսանկարչական ընկերությունները, բժշկության մեջ իրենց մեծ ներդրումն են ունեցել Գասպար Մինապյանը, Հակոբ Դավուդյանը, գորգագործության արվեստում Իզմիրի գորգերը հայտնի էին ամենուրեք և կազմում էին օսմանյան կայսրության արտահանման մեծ մասը, և ընդհանրապես արդյունաբերությունն ու առևտրի 80 տոկոսը հայերի ձեռքում է եղել [Köker, 2008, 399]:

րատ-Ռափայեյան վարժարանին նվիրված բացիկները, հայ բարերարները, դերասաններ, համաշխարհային ճանաչում ունեցող մշակութային գործիչներ և այլն: Իրենց տեսակով հետաքրքիր ձևավորում ունեն Թաիրովի ֆոնդի փոստային բացիկները: «Գինին և խաղողը» թեմատիկ վերնագրով հավաքածուն, հիմնականում գովազդային տեսակի բացիկային հավաքածու է, և գովազդում է 19-րդ դարավերջի և 20-րդ դարակզբի գինեգործական ընկերություններն ու գինեգործությունը:

Հետաքրքիր են Ռուսաստանի ազգային գրադարանի բացիկային հրատարակությունները, որոնք ստանալով անհատական մատենագիտական նկարագրություն, արտացոլված են Ռուսաստանի Ազգային գրադարանի հիմնական էլեկտրոնային կատալոգում: ՀԱԳ արվեստի բաժնում կան բազմաթիվ գրքեր որտեղ մանրակրկիտ նկարագրված են ռուսական փոստային բացիկների պատմությունը, նրանց տեսակները և պահպանման եղանակները: Դրանցից մեկը նախահեղափոխական, Ռոմանովյան կայսրության ժամանակաշրջանի բացիկների մասին պատմող գիրքն է: Այն կոչվում է «Москвичи поздравляют!»: Իսկ գրքի հեղինակը՝ Մարիա Չապկինան ներկայացնում է 1897-1917 թվականներին հրատարակված շնորհավորական բացիկների ամենահարուստ տեսականին, որտեղ ներառում է ավելի քան 750 գունավոր բացիկներ, որոնց մեծ մասն անհայտ էր ժամանակակից ընթերցողին [Чапкина, 2009, 384]:

Ռուսաստանի ազգային գրադարանում հավաքածուների ցուցադրության կազմակերպման, ուսումնասիրման գործում ակտիվ գործունեություն է ծավալում ֆիլատելիստ Արսեն Մելիտոնյանը: Նա ակտիվորեն մասնակցում է ռուսական գրադարանների բացիկային ֆոնդերի լուսաբանման և համայնման աշխատանքներին: Նա գտնում է, որ բացիկների հավաքագրումը կարևոր է գիտահետազոտական գործունեության ծավալման համար: Հաճախակի հանդես է գալիս դասախոսություններով, որոնց ժամանակ ներկայացնում է տարբեր ժամանակաշրջանների բացիկներ, կարևորելով հատկապես դրանց վրայի գրությունները: Ռուսական գրադարաններից խոսելիս կարևոր է նշել նաև Մանկտ-Պետերբուրգի գրադարանի Չուրիկովյան հավաքածուի մասին (որը կազմում է 55.000 միավոր), որտեղ իրենց ուրույն տեղն են զբաղեցնում նաև հայկական բացիկները (մոտավորապես 900 միավոր):

Կոնգրեսի գրադարանը, բավականին մեծ փոստային բացիկների հավաքածու ունի: Կոնգրեսի գրադարանի տարբեր պահոցներում և հատկապես տպագրության և լուսանկարների բաժնում կարելի է գտնել տարբեր տարեթվերի, տարբեր երկրներում թողարկված բացիկային հավաքածուներ, որոնք նաև թվայնացված են: Գրադարանի հավաքածուներում առկա են շատ հին հայկական բացիկներ (մոտավորապես 19.000 միավոր տարբեր պահոցներում): Դրանք բազմատեսակ են ու ներկայացնում են հայ մարդու կենցաղը և գործունեությունը հասարակական կյանքում: Այդ բացիկներից են «Հայ կին Տրապիզոնից», «Այնթապի հայկական եկեղեցին» (1915 թ. հետո այն վերածել էին բանտի, իսկ 1980 թ. վերափոխել են մզկիթի), «Հայ ֆիդայի», «Տեսարան Այնթապից» և այլն:

Բացիկը բացառիկ վավերագրական աղբյուր է. ներկայացնում է յուրօրինակ գեղարվեստական մշակույթ և ազգային արժեհամակարգ: Բացիկը ազգային ժառանգություն է, և կարիք ունի պահպանման, որպես ինքնությունը հաստատող կարևորագույն փաստաթուղթ:

SUMMARY

Referring to the historical sources of the emergence of postcards, and the process of their preservation and replenishment in library funds as printed material, it is necessary to highlight them as a national heritage. Because for a stable future, one must have solid roots and a sturdy value system that confirms one's identity.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դեմոյան Հայկ, Հայկական եկեղեցիներն ու վանքերը միջազգային փոստային բացիկներում: 19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ, Երևան, 2019, 180 էջ:

2. Առաքելյան Սուրեն, Հայաստանի ֆիլատելիայում, Երևան, Սովետական գրող, 1980, 175 էջ:
3. Чапкина М., Москвичи поздравляют! Русская поздравительная открытка 1897–1917 годов, Москва, Контакт-Культура, 2009, 384 с.
4. Советская Россия, Москва, б. и., 1966, 94 с.
5. Osman Köker; 100 yıl önce Türkiye’de Ermeniler, İstanbul, Birzamanlar Yayıncılık, 2008, 399 p.